

„Լավագույն մարզական ընտանիք», հանրապետական մրցույթից Արագածոտնի թիմը վերադարձավ լավ արդյունքով

Ծաղկաձորի օլիմպիական գլխավոր մարզահամալիրի մարզադաշտում կայացան ՀՀ Նախագահի մրցանակի համար արդեն ավանդաբար՝ տասնչորսերորդ տարին անընդմեջ անցկացվող «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի 2017թ. եզրափակիչ փուլի մրցումները: Հանդիսավոր արարողությանը ներկա էր եւ մրցանակները հանձնեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահը շնորհավորեց մրցույթի հաղթողներին, հանձնեց վկայագրեր, դրամական պարգևներ եւ հուշանվերներ, նաեւ գավաթներ՝ Երևանի, Արցախի եւ Հանրապետության մարզերի պատվիրակություններին: Եզրափակիչ փուլ անցած 144 ընտանիքի եւ հաշմանդամություն ունեցող 23 ընտանիքի բոլոր երեխաները Նախագահի կողմից ստացան խրախուսական նվերներ:

Եզրափակիչ փուլի միջոցառմանը մասնակցեց նաեւ մարզպետ Աշոտ Սիմոնյանը: Նա գոհունակությամբ ընդունեց Արագածոտնի մարզի ներկայացուցիչների՝ 12 ընտանիքի ձեռքբերումները: Նրանք լավ էին նախապատրաստվել մրցույթին, ինչը տվեց իր արդյունքը: Կարբի համայնքից Ստեփանյանների ընտանիքը անհատական մրցույթում գրավեց առաջին տեղը: Նրանք լավագույնն էին պարանի ձգում վարժությունում: Իսկ Մնացականյանների ընտանիքը՝ Ապարանից, դարձյալ անհատական պայքարում երրորդ մրցանակ շահեց 80 մետր փոխանցումավազք մրցելաձեւում: Ընդհանուր հաշվարկով մարզը բոլոր մասնակից թիմերի՝ Երեւան քաղաքի, Արցախի եւ մարզերի մեջ գրավեց հինգերորդ տեղը:

Մարզպետը հանդիպեց մասնակից ընտանիքների հետ, ծանոթացավ մրցույթի հետ կապված մանրամասներին եւ պատրաստակամություն հայտնեց իր աջակցությունը ցուցաբերել համանման առաջիկա միջոցառումներում: